

«ԻԾԱԳՐԵՐ» - ԺԱՅՈՒԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ ՔԱՐԱՅԾԻ ԵՎ ԴԻՅԱՅԾԻ ՊԱՇՏԱՍՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐ

Հայ ժողովրդական հանելուկների մի մասը գալիս է վաղնջական ժամանակներից: Դրանցից մի քանիսը վերաբերում են Հայոց բարձր լեռների ժայռերին փորագրված «իծագրեր»-ին («այծագրեր»)՝ մ.թ.ա VII-II հազարամյակներում ստեղծված ժայռապատկերներին:¹ Ահա այդ հանելուկներից մեկը. «Միվտակ կող. /Մն իծան մեջ կարածան»:² Թեպետև այս հանելուկն ակնկալում է «թուղթ և գիր» պատասխանը. բայց շատ ավելի ուշ երևան եկած թղթի համարժեքը հանելուկի բանաձևում, ինչպես տեսնում ենք, կող-ն է լեռան կողը, իսկ նույնաբնույթ մյուս հանելուկներում՝ լեռներ-ը, պայիթ-ը («գառիվայր»), դար-ը («բուր»), փլեր-ը («բլրակներ»): Այս բառերը կասկածի տեղ չեն թողնում, որ հանելուկներում հիշված «իծան»-ը «գրեր»-ը, վերաբերում են ժայռապատկերներին: Ընդ որում, այդպիսի հանելուկների համահայկական բնույթի վկան դրանց գրառման վայրերի

աշխարհագրությունն է՝ Ալաշկերտ, Արցախ, Զեյթուն, Խարբերդ, Խոտրջուր, Կեսարիա, Պարսպատուկիք (Ղարադաղ), Վաղարշապատ, Վան:³ Ինչպես վերոբերյալ հանելուկը, այնպես էլ ներքոբերյալ ուրիշ մի շարք տվյալներ ցույց են տալիս, որ հանելուկներում տառերն՝ «իծան» («այծեր»), իսկ ժայռապատկերներն՝ «իծագրեր» կոչվելու պատճառը մեր հեռավոր նախնիների մտածելակերպում «այծ» և «գիր» հասկացությունների սերտաձած լինելու մեջ է: Իսկ թե ինչու են առաջին հայացքից անհարիր այդ հասկացությունները կապի մեջ դրվել ու սերտաձել, կվոր-ձենք ցույց տալ եղած տվյալների վերլուծության

միջոցով՝ սկսելով այծի (քարայծի) առասպելաբանական կերպարից:

Այծի առասպելաբանական կերպարը ձևավորվել է վաղ նախնադարում: Մայր այծերը սովորաբար երկվորյակ ուլիկներ են ծնում: Այս հանգամանքը պատ-

¹ Կարախանյան Գ., Ժայռապատկերներ, «Հայկական սովետական հանրագիտարան», հ. IV, Եր., 1978, էջ 277: Դրանք տարածված են «մինչև Հայկական Տավրոսի լանջերը, մինչև Ասորիք-Պաղեստինի ու Բրաքի սահմանները» (Մարտիրոսյան Հ., Գիտությունը սկսվում է նախնադարում, Եր., 1978, էջ 9): «Իծագրերին» ծնունդ տված այս տարածքը հնդեվրոպական ցեղերի նախահայրենիքն է. այն նույն տարածքը «Փոքր Ասիայից մինչև Միջագետք և պատմական Իրան», որտեղ մ.թ.ա. IX-VIII հազարամյակներում տեղի է ունեցել վայրի այծի ընտելացումը (Гамкрелидзе Т., Иванов В. Индоевропейский язык и индоевропейцы, издательство ИЯИ, т. I-II, Тб., 1984, т. II, стр. 588):

² Հարությունյան Ս., Հայ ժողովրդական հանելուկներ, Եր., 1965, էջ 178:

³ Նույնը:

ճառ է դարձել, որ հակադրամիասնության մեջ ըմբռնված բնական երևույթները առասպելաբանական մարմնավորում ստանան նաև ի դեմս սպիտակ և սև այծերի: Այսպիսով, երանք դարձել են խորհրդանշները լույսի և խավարի, ցերեկվա և գիշերվա, Լույս (Այս՝ Գեղյանի էակների) աշխարհի և Մութ (Այն՝ Անդրշիրմյան) աշխարհի, արևային և ամպրոպային երևույթների և այլն (նկ. 1):⁴ Արցախյան հեքիաթներից մեկում հանդիպում ենք Լույս և Մութ աշխարհները խորհրդանշող այծերի վաղագույն կերպարներին: Խոր հորում հայտնված հեքիաթային հերոսին խորհուրդ են տալիս. «տու կըքյինաս էսինն՝ տըղը մին ախպուր կա, մին սև էծ, մինգյել մին սիպտակ էծ միշտ կյամ ըն էտ ախպըրան ճուր խմում, լոք կըտաս եր ինիս էտ սիպտակ էծին մաշկեն նստես, քեզ տուս ա ուննական լուս ախշարքը, իսկ վըր շիլ ինգյիր սև էծին մաշկեն նստեցեր, տուս ա ուննական ավելի մթեն ախշարք»:⁵ Հիշատակված աղբյուրը համապատասխանում է առասպելաբանական այն գեոին, որը միմյանցից սահմանագատում էր Լույս (Գեղյանի էակների) և Մութ (Մեդայլների, Անդրշիրմյան) աշխարհները, իսկ սպիտակ և սև այծերը խորհրդանշներն են այդ հակադիր աշխարհների:

Այժի առասպելաբանական կերպարի լուսավոր և խավար երևույթների խորհրդանշաններ ծառայելու երևույթն արդեն առկա է ժայռապատկերներում: Ինչպես Հ. Մարտիրոսյանն է նշում, դրանցում այծապատկերները փոխարինում են արևապատկերներին և արևի խորհրդանշաններին:⁶ Որ այդ երևույթը հնդեվրոպական ժողովուրդների նախնիներին բնորոշ է եղել ի սկզբանե, կարելի է կոսահել հետևյալից: Վաղ հ.-ե. *DY* արմատից են ծագում հայ. *տիկ* «տիկ, տկճոր, պարկապզուկ» <«այծ» և *տիւ* «ցերեկ, օրվա լույս մասը» բառերը:⁷ Մրանցից առաջինի արմատակիցներից և իմաստակիցներից են հուն. *δίζα* «այծ», հին բարձր գերմ. *ziga* «այծ», *zicki* «ուլ», անգլ. *ticcen* «այծիկ» բառերը,⁸ որոնց շարքը պետք է դասել նաև հայ բարբառային *տրլնգալ* բառի **տիր* արմատը (*տիկ* < *DY* + *g* աճական, **տիր* < *DY* + *r* աճական): *Տրլնգալ* < **տիր-լնգալ* նշանակում է

⁴ Մարտիրոսյան Հ., Բարայեյան Հ., Գեղամա լեռների ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական հուշարձանները», հ. 6, Ժայռապատկերներ, պրակ II, Եր., 1971, ազ. 330: Պետրոսյան Ս., Երկգույն-երկհարկ տիեզերքի մասին առասպելաբանական պատկերացումը Հայկական լեռնաշխարհում, «Լրագրեր հասարակական գիտությունների», 1991, թիվ 2, էջ 126-127: Լույսի, Հնագույն Հայաստանի գլխավոր աստվածությունների շուրջ, «Հայաստանի էթնոգրական հանդես» թիվ 2, Եր., 2003, էջ 125-133:

⁵ «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. VII, Եր., 1979, էջ 13: Արցախյան ուրիշ երկու հեքիաթներում գույց այծերի փոխարեն գույց հակամարտ խոյեր կամ ոչխարներ են (Լույս տեղում, հ. V, Եր., 1966, էջ 21, 271-272), բայց նախնական այծերն էին լինելու:

⁶ Մարտիրոսյան Հ., Բարայեյան Հ., Գեղամա լեռների ժայռապատկերները, Եր., 1971, ազ. 298, 302:

⁷ Андреев Н., Раннеиндоевропейский праязык, М., 1986, стр. 87.

⁸ Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ *ՀԱԲ*), հ. IV, Եր., 1979, էջ 405:

«ոստոստել, ցատկոստել»⁹ և որպես երկրորդ բաղադրիչ ունի լնգալ/լնգլնգալ «խախուս դրված լինելով շարժվել, խթխթալ, այս ու այն կողմ խաղալ» բառը:¹⁰

Վաղ հ.-է. DY արմատից ծագած հայ. տիւ բառի արմատակիցներից և իմաստակիցներից են հին հնդկ. divasa- «օր, ցերեկ» հուն. εἴς-δῖος «լավ ու պայծառ օր», լատին. dies «օր», քայց հան հին հնդկ. dyāuś «օր, երկինք», देवा «աստված», հուն. Ζεύς, Διός «Ջևս, աստված», լատին. Deus «Աստված» և այլն բառերը:¹¹

Այծի առասպելաբանական կերպարն է, որ հազարամյակների ճանապարհ անցնելով և սրբազան գրերի հետ ունեցած իր կապը պահպանելով՝ տեղ է գտել Վանի Այգեստան թաղամասի հարևանությամբ գտնված եկեղեցու Քոշահան Սբ Աստվածածին անունը բացատրող ավանդազրույցում: Ըստ դրա՝ եկեղեցում պահպանվող Սբ գիրքը թաղված տեղից հայտնաբերել էր քոշը՝ արու այծը:¹²

Ժայռապատկերներում այծը հանդես է գալիս նաև ամպրոպային երևույթների խորհրդանիշի դերում¹³ և Մեռյալների աշխարհի հետ ունեցած կապի մեջ: Ինչպես Ա. Աբրահամյանն է նշում, այս դեպքում այծն «ունեցել է նաև մոգական նշանակություն, նրա պաշտամունքը կապված է եղել անդրշիրիմյան կյանքի պատկերացումների հետ»:¹⁴ Պատահական չէ, որ հետագա հայկական հավատալիքներում այծին՝ սև այծին առնչված (անգամ նույնացված) ենք տեսնում սատանային: Այդպես է, օրինակ, «այծ» պատասխանն ակնկալող «սատանեն գնաց, թամբը մնաց» հանելուկում¹⁵, մի շարք առածներում (գրի առնված Աշտարակում, Թիֆլիսում, Շիրակում, Վանում)¹⁶, ժողովրդական հեքիաթներում և «Սասնա ծռեր» դրուցազնավեպում:

Ժայռապատկերների այծերի բազմաթիվ ու բազմազան լինելը պայմանավորված է լինելու ոչ միայն նրանց տնտեսական նշանակությամբ ու պաշտամունքով, այլև վերջինս իրականացնող, նախնադարյան քրմի մասին գոյություն ունեցած առասպելաբանական պատկերացումներով: Գոնե ծիսական արարողություններում քուրմը ուղղակի այծ կամ այծամարդ էր ըմբռնվելու: Ըստ այսմ, քրիստոնյա հայի պատկերացումներում անգամ նոր ժամանակների հոգևորականի (մահմեդական, թե քրիստոնյա) կերպարը համադրված էր մնում այծի առասպելաբանական կերպարին: Դրա արտացոլումներն են առկա հազվագյուտ տրվան բառում և ժողովրդական հանելուկներում: Տրվան նշանակում է «մուլայի կար-

⁹ Մալխասյանց Ս., Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), հ. IV, Եր., 1945, էջ 448: Հմմտ. Նույն խոր «այծ» արմատը պարունակող տրտիկ, տրտիկն «չորքոտանիների ուրախ-ուրախ ցատկոստելը, խաղալը, խայտալը» բառերը: (Նույն տեղում հ. IV, էջ 449):

¹⁰ ՀԲԲ, հ. II, Եր., 1944, էջ 205:

¹¹ ՀԱԲ, հ. IV, էջ 410:

¹² Ղանալանյան Ա., Ավանդապատում, Եր., 1969, էջ 245:

¹³ Եղջերավոր խոռուկի կենդանիների և ամպրոպային երևույթների միջև ստեղծված առասպելաբանական կապի վերաբերյալ տե՛ս Ս. Աբեղյան, Երկեր, հ. VII, Եր., 1975, էջ 66:

¹⁴ Աբրահամյան Ա., Նախամաշտոցյան հայ գիր և գրչություն, Եր., 1982, էջ 32:

¹⁵ Հարությունյան Ս., նշվ. աշխ., էջ 57:

¹⁶ Ղանալանյան Ա., Առածանի, Եր., 1960, էջ 291, 295:

դացած առավոտյան աղոթքը՝ մզկիթի աշտարակից»¹⁷։ Հավաստի ստուգաբանություն չունեցող հայերեն այս բառը կարելի է կազմված համարել *տիր-վան* բաղադրիչներից. որոնցից առաջինը **տիր* «այծ» բառն է, իսկ երկրորդը ըստ երևույթին առնչվում է *վանկ/վանց* «հնչյուն, ձայն» բառին, հմմտ. միջ. պարս. *vaŋg* «ձայն, աղաղակ», մանավանդ նրան հանգող քրդ. *vaŋk*, զազա. *veŋg* «ձայն աղաղակ, մուեզզինի կոչը»։¹⁸ «Քահանա և բեմ» պատասխանն էլ ակնկալող հանելուկում ասվում է. «Սարին վրա ածը (այծ) կը մըկըկա»։¹⁹ «Սարին վերեն մարդ մը կայնի. /Կը գրուցի՝ մարդ չի./Կը քարոզի՝ վարդապետ չի» հանելուկը թեև ակնկալում է «գրքակալ» պատասխանը,²⁰ բայց սա, ինչպես ցույց է տալիս *սար* բառը, վերինաստվորված պատասխան է։ Նախապես հանելուկը վերաբերել է քարայծին։ Հանելուկներում սարը համարժեքն է բարձրադիր խորանի և բեմի (հմմտ. մզկիթի աշտարակը), Սբ գիրքն ընթերցող ու քարոզող հոգևորականը՝ սարի վրա մըկըկացող այծի (հմմտ. տրվան կարդացող մուլան). իսկ բարձրադիր Սբ գիրքն էլ հնազույսն ասուր գրերի «իծագրեր»-ի։ Հեթանոս հայերի *Տիր* կամ *Տիր* կոչված աստվածության անուններն ստուգաբանած է. Աղայանը դրանք համարում է արմատակիցները հին հնդկ. *divas* «օր, երկինք», *deva* «աստված», հուն. *Zeus*, *Διός* «Զևս աստված», լատին. *Deus* «Աստված» բառերի,²¹ իսկ դրանք հանգում են վաղինդեվրոպական *ԾԿ* արմատին, որից են ծագում հայ. *տիւ* «օրվա լույս մասը, ցերեկ»՝ **տիր* «այծ» և *տիկ* «տիկ, տկճոր», «պարկապուկ» («այծ») բառերը։ Մեր խորին համոզմամբ, սպիտակ և սև առասպելաբանական հակոտնյա երկվորյակ այծերի նախատիպերի վրա են ձևավորվել *Տիր/Տիր* և *Տորք* կոչված աստվածությունները։ Վաղինդեվրոպական *ԾԿ* արմատից ծագած *Տիր* և *Տիր* դիցանուններում առկա է միևնույն *ր* ածականը (հմմտ. *բարձ-ր*, *թանձ-ր*, *ման-ր*, *մեղ-ր*, *փոք-ր*), բայց առաջինն ունի «լուսավոր (աստված)», երկրորդը՝ «այծ (աստված)» իմաստները։ Տորք/Տիր դիցայծին պիտի առանձնացնել հետազայում նրան համադրված իրանական Տիր (<ավեստ. *Tištrya*) աստվածությունից, որը *Tištrya* աստղի (Միրիուս, Շնիկ) անձնավորում աստվածությունն էր։ Մրա անունն էր կրում հին իրանցիների տոմարի չորրորդ ամիսը (հմմտ. պարսից արեգակնային տոմարի չորրորդ ամսի *Թիր* և հայոց հին տոմարի չորրորդ ամսի *Տրէ* անունները)։²²

Ըստ Ագաթանգեղոսի Գրիգոր Լուսավորիչն ու Տրդատ թագավորը, իբրև թե, հայոց հեթանոսական մեծանները կործանելիս Երազամույն վայրում էին «դիպել ի ձևնապարհի երազացոյց, երազահան Տրի դից, դպրի գիտութեան

¹⁷ ՀԱԲ, հ. IV, էջ 439-440:

¹⁸ Նույն տեղում, էջ 304:

¹⁹ Հարությունյան Ս., *նշվ. աշխ.*, էջ 88: Հմմտ. նաև «Մագը թե գործություն ունենա, էծը մարգարե կը լինի» առածը (Ղանայանյան Ա., Առածանի, էջ 191): Ըստ երևույթին, ժամանակին գոյություն են ունեցել սպիտակ այծ/հայ հոգևորական և սև այծ/օտար հոգևորական (>մուլա) համադրումները:

²⁰ Հարությունյան Ս., *նշվ. աշխ.*, էջ 181:

²¹ Աղայան է., *Բառարկական և ստուգաբանական հետազոտություններ*, Եր., 1974, էջ 148-150:

²² ՀԱԲ, հ. IV, էջ 435:

քրմաց անուանեալ դիւան գրչի Ռմզդի...»;²³ *Երագանան* և *Երագացոյց* բառերը Տիրին բնութագրում են որպես քնի և երագների աստծու (հմմտ. Նոր Նախիջևանում *այծերը գալ* բառակապակցության «քունը տանել» նշանակությունը):²⁴ Տիրի կրած *Գրիչ* մակդիրը համարժեքն է *Գրող* «գիր անող» մակդիրի: Դրանք առկա էին նաև ոգիների աշխարհի հետ կապված այնպիսի մի երևույթի. ինչպիսին է գրեացությունը («թուղթ ու գիր» անելը): Առասպելաբանական այժը նախատիպ ունեցած Տիրի *Գրող* մակդիրը այսօր էլ գործածական է («չարք» նշանակությամբ (հմմտ. «Գրողի բաժին դառնաս», «Գնա՛ գրողի ծոցը» և նույնաբնույթ ուրիշ մի շարք անեծքներ):

Տիրի՝ հոգեառ գործառույթը քրիստոնյա հայերի ժողովրդական հավատալիքներում հատկացվել է աստվածաշնչային Գաբրիել հրեշտակին:²⁵ Ժողովրդական հեքիաթներից մեկում ասվում է. «Տղեն էր *իծու փոստ* քաշեց վրեն, քառսուն հատ զանգուլակ կախեց վզեն, եղավ Գաբրել հրեշտակ»:²⁶ Թե ինչու ժողովրդական հավատալիքներում աստվածաշնչային կերպարներից հոգեհանության հետ կապ չունեցող Գաբրիել հրեշտակապետին է հատկացվել հոգեառի պաշտոնը, թերևս պետք է բացատրել սրա անվան հետ մեր հեթանոսական հոգեառ աստվածության Տիրի կրած և «այծ» նշանակող մակդիրի հեշտունական նմանությամբ (հմմտ. մեր *Տիր* և *Տիր* դիցանունների իրանական *Տիր* դիցանվան հետ ունեցած նմանության պատճառով դրանք կրած աստվածությունների նույնացման երևույթը): Այս դեպքում մենք ի նկատի ենք առել հնդեվրոպական լեզուներում «արու այծ» նշանակող այնպիսի բառերի գոյությունը, ինչպիսիք են լատին. *capre*, հին իռլ. *gabor*, վալ. *gafr*, հին իսլ. *bafir*, հին անգլ. *haefre* արմատակից բառերը:²⁷ Գարծում ենք, թե նույն հնդեվրոպական արմատն է առկա միջնադարյան Սլոնիքի Վասակ իշխանի *Գաբուռ* մականվան (վերջածանցի համար հմմտ. *ծակ-ուռ*, *ճապ-ուռ*, *մամ-ուռ*, *ջաբ-ուռ*), Մեծ Հայքի *Գաբառու դաշտ* («Գաբ-առ. հմմտ. *գառ-առ*, *խոչ-առ*, *կոթ-առ*, *պայծ-առ*) տեղանվան մեջ և *Գաբիթեան* («Գաբ-իթ-եան) ու *Գաբեդեանք* («Գաբ-եդ-եան-ք) գավառանուններում:²⁸

Ագաթանգեղոսի վերահիշյալ հաղորդման մեջ առկա *դպրի գիտութեան քրմաց* բառակապակցությունը չի կարող վերաբերել միայն սև այծը նախատիպ ունեցած աստվածությանը, այլ նաև առասպելաբանական սպիտակ այծը նախատիպ ունեցած աստվածությանը, որովհետև դպրությունն ու գիտությունը նաև մտավոր *լուսավորությունն* են: Իսկ *դիւան գրչի Ռմզդի* բառակապակցության մեջ առկա *Ռմիգդ* դիցանունը, որը հին իրանական Ահուրամազդա աստծու անվան միջին պարսկերենից (պահլավերեն) եկած մի ձև է, վկայում է Երագամույնի մեհ-

²³ Ագաթանգեղայ պատմության Հայոց. Եր., 1983, ՃԸ, 778:

²⁴ ՀԱԲ, հ. I, Եր., 1971, էջ 170:

²⁵ Աբեղյան Մ., նշվ. աշխ., հ. VII, էջ 22:

²⁶ «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. IX, Եր., 1968, էջ 106: Տե՛ս նաև հ. I, Եր., 1959, էջ 500, 512-513 և այլն:

²⁷ HAH, t. II, Եր., 515, որ. 2, Եր. 586:

²⁸ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 46, 51, 109, 110:

յանում նաև իրանական Տիր աստվածության պաշտամունքի գոյության և կրոնական սինկրետիզմի՝ նա մեկ դրսևորման մասին:

Առասպելաբանական սպիտակ և սև երկվորյակ այծերի մարդատիպ ժառանգորդները՝ Տյուր/Տիր և Տորք հակոտնյա աստվածությունները, այդուհանդերձ, համագործակցել էին «իծագրեր»-ժայռապատկերներն ստեղծելիս: Այդպիսի համագործակցության դեպքեր կան նաև այլ երկվորյակ եղբայրների դեպքում: Իրանական լուսավոր Ահուրամազդան (Ռումիզդ) և խավարամած Անրիմանը (Անրմն) միասին էին ստեղծել արևը, հռոմեական Հռոմուլոսն ու Հոնմուսը միասին էին հիմնադրել Հռոմը, մեր Սանասարն ու Բաղդասարը միասին էին հիմնադրել Մասնա բերդը: Գիրը այս դեպքում «իծագրեր»-ը, ըմբռնվում էր Այս Կենդանի էակների աշխարհը, Այն Մեռյալների աշխարհին, անցյալը ներկային կամրջող երևույթ, ուստի կրա ստեղծման գործում մեր նախնիները մասնակից են դարձրել այդ հակոտնյա աշխարհներն ու երևույթները խորհրդաշեշտ սպիտակ և սև այծերի առասպելաբանական փոխանորդ դիցալծերին միաժամանակ, համատեղ:

«Այծ» (սև այծ) և «գիր» հասկացությունների առասպելաբանական-խմաստաբանական կապն արտացոլված ենք տեսնում Անգեղյա Տորքի մասին առասպելում: Այն, Մովսես Խորենացու համաձայն, Տորքն էր «այր խոժոռացել եւ բարձր եւ կոպտարանձն եւ տափակաքիթ, խորակն եւ դժնախայեաց», «վիթխարի հասակաւ եւ ուժով», նա կարող էր «բուռն Խորկանել գործաբար վիմաց, ուր ոչ գոյր գեզութիւն, եւ ճեղքել ըստ կամաց... եւ քերել եղևգամբքն եւ կազմել որպէս տախտակ եւ գրել նոյնպէս եղևգամբք իւրով արծուիս եւ այլ այսպիսիս»: ²⁹ Տորքի կապը ժայռապատկերների հետ նկատած Ա. Ղանալանյանը գրում է. «...ժայռապատկերները, մեր կարծիքով, ավանդական Տորքին վերագրված քարաբնակային այդորինակ նմուշներից են, որն այնքան տարածված ու ծաղկած է եղել Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչների մոտ»: ³⁰ Գարծում ենք այս դեպքում պատճառը «այծ» և «փորագրություն, գիր» հասկացությունները առասպելական հսկա այծամարդու կամ դիցայծի կերպարում համատեղված լինելու մեջ է: Եթե վիպական հսկա Տորքի առասպելաբանական նախատիպը այդպիսին ըմբռնված չլիներ, ապա Տորքը օժտված չէր լինի այնպիսի պինդ եղունգներով, որոնցով ժայռաքեկորներ էր հղկում և դրանց վրա տարբեր պատկերներ փորագրում: Ուրեմն նրա ամենավաղ և բնական նախատիպը եղել է պինդ կճղակներ (կճղակ կոչվում է «չորքոտանիների ոտքի եղունգը») ³¹ ունեցող ժայռաբնակ քարայծը սև արու այծը: «Փորագրություն, գիր» և «այծ», հասկացությունների առասպելաբանական-խմաստաբանական կապի մասին են խոսում և մատ ու

²⁹ Մովսիսի Խորենացու պատմության Հայոց, Եր., 1981, գիրք Բ, գլ. ք: Քեր արմատը նշանակում է «քերած կամ գրած բան» (քեր <հ.-ե. **sger-*, *ger-* «կտրել, ճեղքել»), որից քերել բայի նաև «փորագրել, քանդակել» նշանակությունները: Նույն արմատից ունենք քերական «քերականագետ, քերթող», «քերածո, քանդակագործ» բառը (ՀԱԲ, հ. IV, էջ 570-571): Հմմտ. «Քերոր-նկարակերպ. կամ նախշ» և «Քերդա-գրագիր» («Բառգիրք հայոց», Քննական բնագիրը, առաջաբանի ծանոթագրությունները Հ.Ամալյանի, Եր., 1975, էջ 333):

³⁰ Ղանալանյան Ա., Ավանդապատում, էջ ճխթ:

³¹ ՀԱԲ, հ. II, Եր., 1973, էջ 604:

եղունգի միջնորդական դերը դրանում բացառապես հետևյալ տվյալները: «Մատներ» պատասխան ակնկալող ենագույն հանելուկներից մեկում ասվում է. «Իմ հորանք տասը էծ ունին, տասի ճակատն էլ պեծիկ (պիսակավոր) ա»:³² Այստեղ ասվա են ինչպես «մատներ» և «պծեր», այնպես էլ «մատի եղունգ» և «այծի պիսակավոր ճակատ» առասպելաբանական համադրումները, իսկ հայերեն *եղունգ* բառը գործածվել է նաև փորագրող գործիքի համար՝ «քանդակագործի գրիչ» նշանակությամբ:³³ Քանի որ կճղակը «չորքոտանիների ռոքի եղունգն» էր, իսկ այծը առասպելաբանորեն կարող էր համադրվել սատանային (հմմտ. *սև այծ* և *սև սատանա*), ապա հասկանալի է, որ այծի կճղակը կարող էր ընկալվել ինչպես այծի, այնպես էլ սատանայի եղունգ: Որ հենց այդպես էլ եղել է, ցույց է տալիս օբսիդիանի (վանակատ) ժողովրդական *սատանի եղունգ* անվանումը:

Ս. Մալխասյանցի «Բացատրական բառարան»-ում կարդում ենք. «*Սատանի եղունգ*: 1. Սև գալյախազ (որով իբր թե Կայենը սպանել է Աբելին): 2. Մի տեսակ սև քար, որից շիշեր են պատրաստում: 3. Սև շիշի կտոր, որի վրա թքելով դեն են ձգում (իբրև սատանի քար)»:³⁴ Հրաբխային ծագումով վանակատի խոշոր կուտակումներ կան Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջաններում: Դրանցից մեկը Արագածի լանջի Արտին լեռան հանքավայրն է: Վանակատը, հին քարի դարից սկսած, մարդու կողմից կիրառվել է կտրող և հատող աշխատանքային գործիքներ, իսկ հետագայում նաև նիզակների և նետերի ծայրակալներ պատրաստելու համար: Արագածոտնի մարզի Ներքին և Վերին Նավեր հնավայրերից պեղվել են «հիանալի մշակված վանակատե նետասլաքներ», որոնք «գարմանալի սուր են»:³⁵ Ուրեմն, դրանցից կարելի էր նաև գրոցների ծայրակալներ պատրաստել և դրանցով Հայոց լեռների ժայռաբեկորների փորագրել առաջին ժայռապատկերները, ինչպես և վարվել են մեր հեռավոր նախնիները: Ինչպես նշվեց, գրոցը՝ «քանդակագործի գրիչ»-ը, նաև *եղունգ* («եղունգ») է կոչվել: Մրանով ուղղակի իմաստաբանական կապի մեջ են հայտնվում «սատանի եղունգ»-ը՝ առասպելաբանորեն համադրված «չորքոտանիների ռոքի եղունգ»-ի և ժայռաբանակ առու քարայծը (սև այծը) նախատիպ ունեցած վիպական հսկա Տորքի փորագրող եղունգները:

Տորքի վիպական կերպարի առասպելաբանական-տոտեմական նախատիպը սև այծ լինելու մասին է խոսում ինչպես նրա մոայլ արտաքինի խորենացիական նկարագրությունը, այնպես էլ անվան ստուգաբանությունը: *Տորք*-ը արմա-

³² Հարությունյան Ս., *նշվ. աշխ.*, էջ 103:

³³ ՀԱԲ, հ. II, էջ 22:

³⁴ ՀԲԲ, հ. IV, էջ 189: Համաձայն հայ ժողովրդական ավանդությունների սատանի եղունգ կոչված քարով է աստվածաշնչային Կայենը սպանել իր եղբայր Աբելին (Ղանալական Ա., Ավանդապատում էջ 77, 337-338): Այստեղ գործ ունենք հակամարտ երկվորյակների մասին հայկական (հնդեվրոպական ծագումով) ավանդությունը աստվածաշնչային թեմային հարմարեցնելու հետ (Պետրոսյան Ս., Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, Եր., 206, էջ 85-86):

³⁵ Միմոնյան Հ., «Հայկ և Բել»՝ առասպել լ. ա սք. թե իրապատում, «Հայկագունիներ.

Նվիրվում է Հայոց ձորի ճակատամարտի 4500-ամյակին», Եր., 2013, էջ 100-101:

տակիցն է հուն. *δορκός* «այծքալ» բառի, որի հետ միասին ծագում է հ.-ե. **dor-k-* նախաձևից:³⁶ Վերջինիս **dor-* արմատը միջին ձայնեղարձն է հ.-ե. **der-* «վազել» արմատի, որին են հանգում նաև թրակացիների *Δρενός* արական անձնանունը և նրա իմաստակիցը՝ ալբաներեն *dreni* «եղջերու» բառը:³⁷ Նշենք նաև, որ գոյություն ունեցող կարծիքը *Sarp-* դիցանունը խեթալուվիական *Tarḫuna, Tarḫund, Tarku* կոչված ամպրոպի աստծու անունից ծագելու վերաբերյալ չի հաստատվում: Բայց նրանք հուն *δορκος*-ի հետ միասին ծագում են հ.-ե. **dor-k-* նախաձևից, որովհետև հ.-ե. **d->* հայ. *տ*, հուն. *δ*, խեթ. *t*, հ.-ե. **o->* հայ. *ո* (*o*), հուն. *ο*, խեթ. *a*, հ.-ե. **k->* հայ. *ք*, հուն. *κ*, խեթ. *k*, հ:³⁸

«Այծ» և «փորագրություն, գիր» հասկացությունները դիցայծի առասպելաբանական կերպարում համատեղված է եղել նաև մուծածիրյան ծագումով ուրարտական խալդի աստծու և սեպագիր գրության դեպքում: Վանա ժայռաբլուրին փորագրված «Մհերի դռան» սեպագիր արձանագրությունը բովանդակում է ուրարտական նոր պաշտոնական դիցարանը խալդիի գլխավորությամբ: Ընդ որում, ուրարտական սեպագիրը երկիր է ներմուծվել (կամ տեղում ստեղծվել) մուծածիրյան քրմերի կողմից՝ որպես իրենց հարազատ աստծու պաշտամունքի բաղադրիչ: Այդպիսի բաղադրիչ էր նաև սպիտակ այծի պաշտամունքը: խալդի աստծու տոտեմական նախատիպի արու քարայծը լինելու վերաբերյալ խոսում են ինչպես նրան (միայն նրան) ուլեր գոհաբերելու հանգամանքը,³⁹ այնպես էլ նրա կրած *խալդի* անունը: *Hal-di* բաղադրիչներից բաղկացած այս դիցանվան առաջին բաղադրիչը նույնական է հայերեն *խաղախ* (<*խաղ-ախ) «կաշի, մորթի» բառի **խաղ* «այծ» արմատին, իսկ երկրորդը՝ հայերեն *դի-ք* «աստված, կուռք» բառն է:⁴⁰

«Փորագրություն, գիր» և «այծ» հասկացությունների սերտաճած լինելու փաստն է արձանագրել հայ **կուտ* արմատը, որից ունենք բարբառային *կտի* (<*կուտ-ի) «գառ, ուլ, ոչխար, այծ», «հատկապես՝ այծ» և *կտիկ* (<*կուտ-իկ) «այծ, պստիկ այծ» բառերը⁴¹ (վերջածանցի համար հմմտ. *արտի, արտիկ* «վայրի ոչխար»): Ըստ երևույթին, **կուտ* արմատը նշել է արու այծերի մենամարտելիս իրար հրմշտելու, պոգահարելու հատկությունը, որովհետև այն առկա է նաև հետևյալ բարբառային բառերում. *կտել* (<*կուտ-ել), *կտկտել* (<*կուտ-կուտ-ել), *կտտել* (<*կուտ-ուտ-ել), «հրել, մշտել, մխտել, հրմշտել»;⁴² «հրել, մխտել, բռթել», «այս ու այն կողմ հրմշտել, բռթբռթել», «առաջ քշել»:⁴³

³⁶ Պետրոսյան Ս., Շնագույն շայաստանի գլխավոր աստվածությունների շուրջ, էջ 127-128, Նույնի, Ամպրոպի աստծու մակդիրները գահանուններում, «ՎՊՄԻ միջազգային գիտա-ժողովի նյութեր նվիրված հայ գրատպության 500-ամյակին», Վանաձոր, 2012, էջ 7, ծան. 5:
³⁷ *Georgiev В.* Исследования по сравнительно-историческому языкознанию. М., 1958, стр. 120.

³⁸ Ջահուկյան Գ., շայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 85, 135:

³⁹ *Меликшвили Г.* Урартские клинообразные надписи, М., 1960, надп. N 27.

⁴⁰ Պետրոսյան Ս., խալդի դիցայծի և զինու պաշտամունքի շուրջ, «Ճանդեմ ամսօրեայ», Վիեննա, 1997, թիվ 1-12: 2մտ. 2ԱԲ, հ. IV, էջ 405:

⁴¹ Սրվանդոյան Գ., Երկեր, հ. I, Եր., 1978, էջ 340, 2ԲԲ, հ. II, էջ 497:

⁴² 2ԱԲ, հ. II, էջ 664:

⁴³ 2ԲԲ, հ. II, էջ 497:

Հայ * *կուտ* արմատը, մեր կարծիքով, հանգում է հ.-ե. **gʷod-* նախաձևին և իր գուգահեռներն ունի ի դեմս հայ. *կով* և շումեր. *gud* «ցուլ» բառերի: Ճիշտ է, վերջինս համարվում է հնդեվրոպական լեզուներում «կով» նշանակող բառերի արմատակիցը,⁴⁶ բայց հնչյունաբանորեն ավելի մոտ է ոչ թե դրանց **gʷod* նախաձևին, այլ հայ * *կուտ* *gʷod-* արմատին, որովհետև հ.-ե. **gʷ->*հայ. *կ*, հ.-ե. **d->* հայերեն *տ*: Ի դեպ, շումեր. *gud* «ցուլ» բառը կարող էր նախապես նաև «այծ» նշանակել,⁴⁷ նրան փոխանցված իր մատղաշի միջնորդությամբ: Այս տեսանկյունից ուշագրավ է, որ հայերեն *ցուլ* «խոշոր եղջերավոր անասունի արուն» բառի հունարեն արմատակիցները տարբեր «անասունների ձագ» են նշանակում, իսկ *յաւանակ* բառը, որ հին հայերենում նշանակում էր «ձագ չորքոտանիների, հատկապես իշու, ձիու, նաև եղնիկի», բարբառներում և արդի գրականում ստացել է «ավանակ», «էշ, մեծ էշ» իմաստները:⁴⁸

* *Կուտ* (> *կտի*, *կտիկ* «այծ, ուլ») արմատի «փորագրություն, գիր» հասկացությանը ևս հատկացված լինելու փաստն են արձանագրել հետևյալ հայերեն բառերը. *կուտ* «սպի, մարմնի վրա ցտած նշան», որից *գիր կտեալ* «մաշտեսիների ձեռքի վրա բանված պատկեր»,⁴⁹ «մաշտեսիների կոների վրա դաճած նկար, հաջի արած», *կտել* «կետ-կետ կամ կուտ-կուտ նշաններ դնել, մարմնի վրա գանազան նշաններ կամ նկարներ դաճել»,⁴⁸ մանավանդ միջնադարյան «Բառգիրք հայոց»-ի «*Կտեալ-գծեալ, կամ գրեալ*» բառը:⁴⁹

Քարայծի սերտ կապը «փորագրություն, գիր» հասկացության հետ հաստատվում է նաձ *քաղ* «արու այծ» և «*Քաղակ-քանդակումն*»,⁵⁰ բառերի արմատակիցներ լինելու միջոցով. *քաղակ* < **քաղ-ակ* (հմմտ. *բոն-ակ*, *ձոր-ակ*, *տն-ակ* և այլն): Հայերեն նույնարմատ *քաղ* «ընտրելով պոկել, հավաքել» և *ցել* «ճեղք, պատռվածք» բառերը ծագած են համարվում հ.-ե. **qel-*/**skʷel-* նախաձևերից: Դրանցից առաջինն, ըստ Հ. Աճառյանի, ծագում է նույն արմատի *s-*ից գուրկ, իսկ երկրորդը *s-*ով ձևից:⁵¹ *Քաղ* և *քաղակ* բառերը «արու այծ» և «քանդակումն» նշանակություններով, իմաստով հարում են նախաձայն *s-*և պաշապանած հնդեվրո-

⁴⁶ ИЯИ, т. II, стр. 575, ЗУФ, в. II, էջ 639:

⁴⁷ Ուշագրավ է, որ փյունիկյան այբուբենում «ա» հնչյած **ʾ** և **A** տառանշանները (նաև արանց կոդքի դրված տեսակները) այլե՞ «ցուլ» էին կոչվում, բայց ավելի նման էին այծագլխի, քան ցլագլխի: Ըստ երևույթին, գործ ունենր աքադական ալպու «եզ, ցուլ» կոչված սեպախմբի ազդեցության հետ՝ ծագած շումերական գուլ «կով, ցուլ» մեհենագրից (*Khazro Khazai*, նշվ. աշխ., էջ 24): Հունական *A-*ն, լինելով իր փյունիկյան նախատիպի գլխիվայր շրջված տեսակը, դարձյալ այծագուլին է հիշեցնում և գլխավորում է տառաշարքն այնպես, ինչպես առաջնորդ այծն իր հոտը: Իսկ այդ տառանշանը արտահայտում է ինչպես առաջին հնչյունը փյուն. այլե՞ «ցուլ» («հուն. ալֆա) բառի. այնպես էլ հուն. *αἴ* «այծ» և հայ այծ հնդեվրոպական ծագումով արմատակից բառերի (ЗУФ, в. I, էջ 169):

⁴⁸ ЗУФ, в. III, էջ 390-391, 591, в. IV, էջ 462:

⁴⁹ ЗУФ, в. II, էջ 664:

⁵⁰ ЗФФ, в. II, էջ 496-497:

⁵¹ «Բառգիրք հայոց», էջ 171:

⁵² Նույն տեղում, էջ 329:

⁵³ ЗУФ, в. II, էջ 541-542:

պական ազգակից լեզուների հետևյալ բառերին. հուն. σκάλλω «փորել», «քաղհանել», σκαλίζ «բրիչ», թրակ. σκάμω «դանակ, թուր», խեթ. iškallāi «պատռել, ճեղքել, խորտակել», լատին. scalpo «քանդակել», լիտվ. skėlti «ճեղքել», հին իսլ. skalm «թուր, դանակ» և այլն:⁵²

**Քաղ արմատի* «ճեղքող, խորտակող, պատռող» իմաստի զարգացումով ունենք ինչպես հեթանոս հայերի ռազմի աստծու Վահագնի *վիշապաքաղ* մակդիրը (լայնաբառ «վիշապասպան») իմաստով), այնպես էլ *քաղ* «արու այծ» բառը: Այս վերջինի գարգացման աստիճանի վրա է հունարեն (պելասգերենից) ἱεῶλος «կրտած այծ, քաղ» բառը, որը Գ. Ջահուկյանը հակված է համարելու մեր *քաղեն, քեղի* և *ցելում* բառերի (վերջինիս հ.-ե. *sk- նախաձայնով ձևից) արմատակիցը:⁵³ Թե՛ հայերեն, թե՛ հունարեն բառերի դեպքում ի նկատի է առնվել պոզաիարող արու այծը: Եթե հայերեն *քաղ* և հունարեն ἱεῶλος բառերը ի ցույց են հանում արու այծի «ճեղքող խորտակող» լինելու իրողությունը, ապա հայ. *քաղակ* «քանդակումն» և լատին. scalpo «քանդակել» նրանց արմատակից բառերը բացահայտում են մեկ ուրիշ իրողություն այծին, ապա դիցայծին, վերագրված քարեղեն նյութը փորագրելու, քանդակելու կարողությունը:


Հունարեն ἱεῶλος բառը մեզ տանում է դեպի հունա-էտրուսկյան ծագումով լատինական այբուբենի X տառանշանը, որի *իքս* անունը կրկնում է հունարեն բառի առաջին մասը (այբուբենների հիմք դարձած մեհենագրություններում ձայնավորումը ակրոֆոնիկ՝ առաջնավանկային, առաջնաձայնային էր), իսկ տեսքը՝ Հայաստանի ժայռապատկերներից հայտնի և դրանցում այծապատկերներին ուղեկցող  նշանը (նկ. 2):⁵⁴ Հին գերմանների մեհենագրային ծագումով ռունական այբուբենում (նկ. 3) կար X նշանագիրը g (q) հնչյունով: Ուշագրավ է, որ գերմանական լեզուներում կան «ուլ, այծիկ» և «էզ այծ» նշանակող, նույնպես g (q) հնչյուն ունեցող մի շարք բառեր. Հմմտ. գոթ. gaitis, հին անգլ. gait, անգլ. goat, հին իսլ. geit, հին բարձր գերմ. geiz, որոնց հ.-ե. *g^(h)j- նախաձայնը համարվում է նախաստեմական լեզվից կատարված փոխառություն:⁵⁵ Թեպետև նշվել է գերմանական լեզուների հիշյալ բառերի և լատին. haedus «այծիկ, ուլ», բառերի ազգակիցներ լինելու իրողությունը, բայց հաշվի չի առնվել, որ դրանք իրենց արմատակիցներն ունեն հայերենում՝ ընդ որում արմատի ավելի նախնական նշանակությամբ:

⁵² ՀԱԲ, հ. II, էջ 541-542: Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 59, Георгиев В., նշվ. աշխ., էջ 114:

⁵³ Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 114, ծան. 33:

⁵⁴ Մարտիրոսյան Զ., Բարայթյան Զ., նշվ. աշխ., նկ. 150, Մարտիրոսյան Զ., Գեղամա լեռների ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական հուշարձանները», 11, Եր., 1981, աղ. I: Նույնի, Հայաստանի նախնադարյան նշանագրերը և նրանց ուրարտա-հայկական կրկնակները, Եր., 1973, էջ 23, աղ. V: Կարախանյան Գ., Սաֆյան Պ., Մյունխիքի ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական հուշարձանները», 4, Եր., 1970, աղ. 246, նկ. 1, աղ. 122, նկ. 2, աղ. 114, նկ. 4:

⁵⁵ ИЯН, т. II, стр. 586.



Խոսքը հայերեն կայթ բառի և նրա տարբերակ *կայտ (կայտատ և կայտիտ բառերում) արմատի մասին է, որոնք համարվում են հավաստի ստուգաբանություն չունեցող արմատներ:⁵⁶ Կայթ նշանակում է «ցատկոտնելը, ոտքի թփրոտց, ուրախության՝ ցնծության պար», որից՝ կայթել «ուրախանալ, ցատկոտել, խաղալ»՝ այծերին և հատկապես ուլերին բնորոշող իմաստներ (հմմտ. Հիշյալ 15a.05 բառը՝ «ցատկաղ, աշխույժ») իմաստով գործածված հենց այծի համար):⁵⁷ Կայթել նշանակում է նաև «ծափ զարնել», իսկ կայթս հարկանել «բաժակին ուժգին խփելով հեղեղները»:⁵⁸ Վերջիններս ևս առնչվում են այծերին, երբ ի նկատի ենք առնում արու այծերի մենամարտը կրկնող ռազմական ծափ պարերի համապատասխան ավանդաբանները և նախնական բաժակները այծի պոզերից լինելու հանգամանքը: Կայտատ բառը բաղկացած է կայտ արմատից, -ատ վերջածանցից (հմմտ. խոչատ, հաւ-ատ, պայծ-ատ, վրտ-ատ և այլն) և նշանակում է «աշխույժ, առույգ, եռանդուն»: Ըստ Հ. Աճառյանի՝ սրա երկրորդ ձևն է կայտիտ «ուրախություն, ուրախությունից խաղալ ցատկոտնելը», որից՝ կայտոալ «ուրախ ուրախ վազվոտել, եռալ-զեռալ»:⁵⁹ Կայտ արմատի *կայծ տարբերակի երբեմնի գոյության ընդունումը (տ/ծ հնչյունական համապատասխանության տեսանկյունից հմմտ. բուտ/բուծել, մուտ/մուծել, պիղտ>պղտոր/պիղծ, տատանել/ծածանել արմատակից գույզերը) մեզ նորից տառնում են «այծ» և «գիր» հասկացությունների իմաստաբանական միասնական դաշտ. հմմտ. «Կայծել-դրաշմել, կամ զրել»:⁶⁰

Հայերենի և գերմանական լեզուների հիշյալ բառերի ազգակցության փաստը հնարավոր է դարձնում ուղղակի կապի բացահայտումը նաև հին գերմանների ունական այբուբենում ժ (դ) հնչյած  նշանի և Հայկ (Օրիտն) համաստեղության գծապատկերը ներկայացնող  նշանների միջև: Ժայռապատկերներից սկսած սա համարվել է խորհրդանշանը հայոց աստվածային նախահայր Հայկի, որովհետև այս համաստեղությունը նրան էր ձուլված և նրա անունով էլ կոչվում էր Հակ/Հայկն: Ժայռապատկերներում այս նշանը հաճախ է պատկերված Հայկին խորհրդանշող առաջնորդ քարայծի հետ միասին՝ անգամ վերջինիս մարմնի փոխարեն:⁶¹ Վերևում նշվեց, որ վաղ հ.-ե. DY արմատը ժառանգ լեզուներում ունի ինչպես «այծ», այնպես էլ «լույս» և «աստված» նշանակող հետևորդներ (հմմտ. հայ, տիկ, տիւ, Տիր): Այս DY արմատն էլ պայմանավորել է գերմանական ունների

⁵⁶ ՀԱԲ, հ. II, էջ 505-506, 510:

⁵⁷ Զահուկյան Գ., Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 86:

⁵⁸ ՀԱԲ, հ. II, էջ 505:

⁵⁹ Նույն տեղում, էջ 509-510:

⁶⁰ «Բառգիրք հայոց», էջ 157:

⁶¹ Պետրոսյան Ս., Հայոց մեհենագրության ակունքներում, Եր., 2008, էջ 7-8, 14-15, նկ. 2 գ:

✠ նշանի ժ (դ) արտասանությունն այնպես, ինչպես Հայկ (Օրիոն) համաստեղությունը պայմանավորել է նրա տեսքը:

Գերմական լեզուներն ունեն «տառ, գիր, գիրք, գրություն» և այլն նշանակող հետևյալ բառերը. գոթ. *bōka*, հին իսլ. *bók*, հին անգլ. *bōc*, հին ֆարձր գերմ. *buoh* և այլն. իսկ սլավոնական լեզուները՝ հին սլավ. *bukъ* «առա», հին ռուս. *букы, бкѣвъ* «տառեր, գրեր, գիր, գրություն, ևսմակ» և այլն:⁶² Գերմանական և սլավոնական լեզուների այս բառերը համարվում են ծագած հաճախեմու, կաղնու հեղեվորտպական անուններից, ընդ որում, սլավոնական լեզուների բառերը իրենց *k*-երի պատճառով համարվում են փոխառյալ գերմանականից: Այսուհանդերձ, հայկական տվյալների լույսի ներքո այդ երևույթը հետաքննելու է, որ այլ բացատրություն ունենա: Ապացուցված է, որ հայ. *բուծ* (<հ.-է. **bhug*-o) «ուլ, գառ» բառը արմատակիցն է հին հնդկ. *bukkā* «այծ», պարս. *buz* «ուլ, այծ», հին իռլ. *boec* «արաւ այծ», հին իսլ. *bukkr*, հին անգլ. *bucca*, հրգ. *boe* և այլն բառերի:⁶³ Վանա լճի ավազանում գտնված հին հայկական *Բզնունիք* (<**Բուզ*-նունի-ք), *Բուծունիք* (<**Բուծ*-ունի-ք) և *Բզունիք* (<**Բզ*-ունի-ք)⁶⁴ գավառների անուններում *բուծ* բառի հնչունական տարբերակների գոյությունը հին հնդկերեն *bukka* բառի հետ կարող են վկայել հոգուտ այն բանի, որ նրանց հիմք հնդեվրոպական արմատը ժառանգ լեզուներում (թաբուի. նաև **bhug*-o-ի զուգահեռ **bhugo*- ձևի պատճառով) կարող էր և այլ կերպ արտահայտվել:⁶⁵

Եթե այդպես է, ապա «գիր, գրություն» նշանակող սլավոնական լեզուների վերոհիշյալ բառերը հս կարող են փոխառյալ չլինել և արմատակիցները լինել «այծ» նշանակող ազգակից լեզուների բառերին: Այս դեպքում ի նկատի առնենք, որ գերմանական ու սլավոնական ցեղերի հնդեվրոպական լեզվակիր նախնիները ևս հայերի նախնիների հետ հնդեվրոպական միասնության դարաշրջանում բնակվել են Հայկական լեռնաշխարհում և մերձակա տարածքներում: Քիչ հավանական է, որ քարիդարյան մարդը ավելի վաղ սկսեր ծառերին նշաններ դնելը, քան դրանք քարերին ու ժայռերին փորագրելը: Ծառերին փորագրելը հաջորդելու էր քարերին նշանագրելուն լեռնային նախահայրենիքից անտառապատ տարածք կատարված բնակչության արտագաղթի հետևանքով:⁶⁶

⁶² ИЯИ, т. II, стр., 622-623.

⁶³ ZUF, h. I, էջ 482:

⁶⁴ Երեմյան Ս., *Էշվ. աշխ.*, էջ 45, 108-109:

⁶⁵ Պետրոսյան Ս., *Հայոց մեհենագրության ակունքներում*, էջ 18-20:

⁶⁶ Նույնպիսի մի պատճառով հյուսիսային լեռներից միջագետքյան հարթավայր տեղափոխված բնակիչները քարին նշանագրելը անհրաժեշտաբար փոխարինել էին կավե սալիկներին նշանագրելով: Ըստ այդմ հասկանալի է, թե ինչպես է Հայկ (Օրիոն) համաստեղության գծապատկերը ներկայացնող ✠, ☼ նշանը «աստված» նշանակող * և «կին» նշանակող ▼ նշանների հետ միասին հայտնվել վաղ շումերական կավե սալիկներից մեկի վրա (նկարները տե՛ս Mallowan M.E., *L'aurore de la Mésopotamie et de l'Iran*, Éditions sequoia, Paris-Bruxelles, 1966, p. 65, fig. 59-61; «Le berceau de l'humanité», La présente édition de L'encyclopédie de la civilisation est publiée sous la direction de Marcel Brion de l'Académie française, Londres, Geneve, 1976, p. 87, fig. 111):

Այս տեսանկյունից ուշագրավ է հայ. *գիր* բառը, որի «տառ, գրություն» նշանակությունից ավելի եին է «փորագրել, քանդակել» նշանակությունը. ինչը զայիս է դեռևս հնդեվրոպական միասնության ժամանակաշրջանից: Նրա հիմք հ.-է. **wer-* արմատից են ծագում նաև ժառանգ լեզուների հետևյալ բառերը. հին հնդկ. *vṛana* «վերք, պատվածք», հուն. *ρίνϋ* «խարտոց», ալբ. *vore* «վերք», հին սլավ. *rana* «վերք», անգլ. սաքս. *wrotan* «փորել» և այլն:⁶⁷ Հստ Ն. Աճառյանի՝ «մեր բառի հետ ճիշտ համեմատելի են գոթ. *writs* «գիծ», անգլսաքս. *writ* «գիր», *wroett* «փորագրություն, զարդարանք», *writan*, մագ. *written*, որոնք բխում են նույն *wer-* արմատից՝ աճած 1 աճականով և նշանակում են «վիրավորել, պատռել, փորագրել, նկարել, գրել», իսկ նշանակության զարգացման համար հմտ. հուն. *γράφω* «ճանկնել, փորագրել, գրել, նկարել», որի համար էլ՝ հայ. *քերել* և *քերականություն*:⁶⁸ «Գրել»// «քարին փորագրել» նշանակությունը պահպանվել է հետագա դարերում: Սովսես Խորենացին հետևյալ կերպ է նկարագրում մեսրոպյան այբուբենի արարումը: Մեսրոպ Մաշտոցն աղոթելիս «տեսանե ոչ ի թուն երագ եւ ոչ յարթութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երեւութացեալ հոգոյ աչաց թաթ ձեռին աջոյ *գրելով ի վերայ վիմի*. զի որպէս ի ձեան վերջք գծին *կուտեալ ուներ քարն*... եւ յարուցեալ յաղօթիցն՝ եստեղծ զնշանագիրս մեր...»:⁶⁹

Ինչպես **կուտ* «այծ» (որից *կտի*, *կտիկ* «այծ, ուլ») և «*Գտեալ*-գծեալ, կամ գրեալ»,⁷⁰ այնպես էլ *քաղ* «արու այծ» և «*Քաղակ*-քանդակումն»⁷¹ արմատակից գույզերը վկայում են, որ դարեր ու հազարամյակներ շարունակ հայի լեզվամտածողության մեջ պահպանված են եղել հայոց հնագույն գրության ժայռապատկերային փորագրություն լինելու վերիուշը և դրա «իծագրեր» կոչվելու պատճառների գիտակցումը: Դրանցից գլխավորները լինելու էին. 1. քարայծերի բնակեցրած ժայռոտ բարձունքներում ժայռապատկերների գտնվելու իրողությունը. 2. ժայռապատկերն ստեղծողների այծամարդ կամ դիցայծ լինելու մասին պատկերացումը. 3. առասպելաբանական այծի կճղակ (եղունգ) ըմբռնված օբսիդիանի (սատանի եղունգ) միջոցով ժայռապատկերների փորագրված-գրված լինելու դարեր փոխանցված հուշը: Դրանց «իծագրեր» կոչվելու առիթով կարելի է նշել նաև, որ օբսիդիանե ծայրակալով գրոցին փոխարինած մետաղե գրոցի պատճառով հետագա փորագիր գրերը կոչվել են նաև *երկաթագրեր*՝ այնպես, ինչպես նույն պատճառով *երկաթագիր* էր կոչվում մեսրոպյան այբուբենը:

Բերված նյութը և դրա վերլուծությունը մղում են հետևյալ եզրակացության: Հնդեվրոպական հնագույն գրությունը եղել է ժայռափոր պատկերագրությունը: Հայկական լեռնաշխարհի ժայռերին հնդեվրոպական տեղաբնիկ ցեղերի կողմից նախ օբսիդիանե, ապա մետաղե ծայրակալով գրոցի միջոցով արված

⁶⁷ ՀԱԲ, հ. I, էջ 561:

⁶⁸ Նույնը:

⁶⁹ Խորենացի, Գ, ծգ:

⁷⁰ «Քաղցիրը հայոց», էջ 171:

⁷¹ Նույն տեղում, էջ 329:

փորագիր «իծագրեր»-ժայռապատկերներն են դարձել հիմքը հայկական, թերևս մյուս հնդեվրոպական ժողովուրդների ևս, մեհենագիր գրությունների:

“ИЦАГРЕР”- НАСКАЛЬНЫЕ ИЗОБРАЖЕНИЯ С ТОЧКИ ЗРЕНИЯ КУЛЬТА ГОРНОГО КОЗЛА И КОЗЛИНОГО БОЖЕСТВА

Резюме

С. Петросян

В наскальных изображениях “ицагрер” (“козлиное писание”) Армении зафиксированы и символические сцены. Некоторые петроглифические знаки этих сцен являются нероглифами. Мовсес Хоренаши в своем труде “История Армениии” пишет об исполнении Торке, который, руками хватая скалы, мог сглаживать их шероховатости ногтями и вырезать на них орлов и тому подобное (Хоренци, II, 8). Без сомнения, речь идет о наскальных изображениях армянских гор. Значит, Торку было приписано изобретение петроглифических знаков – древнейшего нероглифического письма Армениии. Из этого письма позднее возникло нероглифическое письмо языческих армян, помещенных в средневековых армянских манускриптах. Однако известно, что в пантеоне языческих армян богом письменности считался Тир. Он-писец верховного бога Арамазда, толкователь снов и гадалышник, его эпитеты զրիչ, զրալ (“писец, пишуший”). Последнее слово значит также “черт, злой дух”. Интересно, что Мовсес Хоренаши описал внешность Торка как мрачного, безобразного человека со сплюснутым носом и свирепым взглядом глубоко посаженных глаз. Дело в том, что мифологические образы Торка и Тира происходят от одного тотемического прототипа: это горный козел. Ср. н.-е. *dor-k- > арм. Տորք, греч. δорκάς “серна, козуля”, н.-е. *dig- “коза, козел” < рапи. н.-е. DY > Տիր, տիկ “бурдюк, волынка” (< “коза”). Фактически, наличие мифологическое представление н.-е. предков армян о двух божественных близнецах, действующих сообща в деле создания наскальных изображений армянских гор, значит и нероглифического письма языческих армян.

Տեղեկացումներ հեղինակի մասին

Պետրոսյան Մարգիս Գարեգինի - պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
ԳՊՄԻ պատմության և իրավագիտության ամբիոն
E-mail: petros1995@mail.ru